

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ) ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱԼՈԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգի ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ մարզերից և տարբեր քաղաքային համայնքներից (այդ թվում՝ Երևանից), ինչպես նաև առանձին կառուցապատողներից ստացված բազմաթիվ հարցումներով՝ ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N92 որոշմամբ կիրառման մեջ մտած հանրապետության գյուղական բնակավայրերում բնակելի կառուցապատման օբյեկտների կատալոգում ներառված 10 անհատական բնակելի տների և դրանց կից տնտեսական շինությունների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը նաև քաղաքային բնակավայրերի կառուցապատման ժամանակ օգտագործելու վերաբերյալ, ինչը վկայում է բնակչության լայն խավերի կողմից նշված գործընթացի առավել լայն տարածման պահանջարկի մասին:

Վերը նշված որոշմամբ կիրառման մեջ մտած կատալոգում ներառված բնակելի տների նախագծերը, նախատեսված լինելով նաև բնակչության սոցիալապես անապահով խավերի համար լայն կիրառություն չգտան՝ կառուցապատողի համար գնային տեսանկյունից ոչ մատչելի լինելու պատճառով:

Այս համատեքստում առավելագույնս կարևորվում է նոր կատալոգի մշակումը, որի հիմնական նպատակն է՝ ստեղծել հանրապետության ոչ միայն գյուղական, այլ նաև քաղաքային համայնքների համար կիրառելի 1-2 հարկանի 1-ից 6 սենյականոց, հետագա զարգացման հնարավորությամբ 10-ից ավելի մի քանի տիպի բնակելի տների նախագծային փաստաթղթեր, որոնց հատակագծային և ճակատների տարբերակային լուծումների մշակման ու դրանց համադրման արդյունքում հնարավոր կլինի ապահովել քաղաքաշինական ներդաշնակ բնակելի միջավայրի կազմակերպման և ձևավորման գործընթացը:

Անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կատալոգի ներդրումը հնարավորություն կընձեռի կառուցապատողին զգալի միջոցներ և ժամանակ խնայելով, ձեռք բերել իր պահանջներին համապատասխան հուսալի և կենցաղային բարվոք պայմաններ ապահովող բնակելի տների նախագծեր, շրջանցելով նախագիծ պատվիրելու և այն սահմանված կարգով հաստատելու փուլերը, միաժամանակ ստեղծելով նախապայմաններ՝ քաղաքային և գյուղական բնակավայրերում կառուցապատման միասնական ճարտարապետական լուծումներով միջավայր ձևավորելու համար:

Այս կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հայտարարվել է մրցույթ, որի նպատակն է՝ ընտրել ազգային և կենցաղային ավանդույթների պահպանմամբ, շինարարության ժամանակակից տեխնոլոգիաների և տեղական շինանյութերի կիրառմամբ, ճարտարապետահատակագծային սկզբունքային լուծումների և դրանց առանձին մասերի, մասնավորապես՝ ճակատների հնարավոր այլընտրանքային դասակարգմամբ, ինչպես նաև խոշորացված արժեքային տեղեկատվությամբ բնակելի տների լավագույն նախագծեր, որոնք կներառվեն նոր մշակվող կատալոգում:

Միևնույն ժամանակ, որպես նորամուծություն, նախատեսվում է ներդնել կառուցապատողի կողմից կատալոգին ծանոթանալու և դրանից ընտրված բնակելի տան փորձաքննություն անցած ու սահմանված կարգով համաձայնեցված նախագծանախահաշվային փաստաթղթերը համապատասխան էլեկտրոնային կայքից ձեռք բերելու կարգը:

ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N1573-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N1075-Ն որոշման հավելված N4-ի համաձայն՝ ՀՀ գյուղական համայնքներում բազմակի օգտագործման

բնակելի տների նախագծերի կատալոգի ստեղծման ծառայությունների ձեռքբերման համար հատկացվել է 13,000.0 հազ. դրամ, այդ թվում՝

- նախագծային առաջարկների մրցանակային ֆոնդ՝ 750.0 հազ. դրամ,
- աշխատանքային նախագծերի ձեռքբերում՝ 10,250.0 հազ. դրամ,
- նախագծերի կատալոգի հրատարակում՝ 2,000.0 հազ. դրամ:

Որպես տնտեսում, մրցանակային ֆոնդ (750.0 հազ. դրամ) կսահմանվի միայն մրցանակային տեղեր շահողների համար, իսկ հաղթողների հետ կկնքվեն պայմանագրեր, աշխատանքային նախագծերը մշակելու նպատակով:

Մինչդեռ հանրապետությունում գործող նախագծային աշխատանքների արժեքի որոշման նորմերի համաձայն կատարված նախնական հաշվարկների՝

- 1 հարկանի բնակելի տան նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման արժեքը կկազմի՝ 1,650.59 հազ. դրամ,
- 2 հարկանի բնակելի տան նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման արժեքը կկազմի՝ 3,031.08 հազ. դրամ:

Այսպիսով՝ 1 տիպի 1 և 2 հարկանի բնակելի տների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման միջինացված արժեքը կկազմի՝ մոտ 2,200.0 հազ. դրամ: Կատալոգում ներառվելիք 10 բնակելի տների նախագծային փաստաթղթերը մշակելու համար կպահանջվի մոտ 22,000.0 հազ.դրամ: Սակայն ՀՀ քաղաքաշինության նախարարությունը միջոցներ է ձեռնարկել նշված աշխատանքներն իրականացնել վերը նշված որոշմամբ աշխատանքային նախագծերի ձեռքբերման համար հատկացված 10,250.0 հազ. դրամի սահմաններում, որի արդյունքում կտնտեսվի զգալի գումար:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Զ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ) ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱԼՈԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության համայնքներում (քնակավայրերում) անհատական քնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգի ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի ավելացման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Զ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ) ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱԼՈԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության համայնքներում (քնակավայրերում) անհատական քնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգի ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ) ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱԼՈԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

«Հայաստանի Հանրապետության համայնքներում (քնակավայրերում) անհատական քնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգի ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից: